ԳԼԱԴՍՏՕՆԻ ՃԱՌԸ

Լրագիրների մէջ տպված է Գլադստօնի հետեւեալ ճառը, որ նա խօսեց Լօնդօնի լօրդ-մէրի տուած ճաշի ժամանակ:

Արտաքին քաղաքականութեան մէջ մենք մեր հայեացքները շատ կէտերի վրա պէտք է դարձնենք: Արեւելեան հարցը չէ կարելի անուշադիր թողնել: Այդ կողմից մենք առանձին բաւականութիւն կարող ենք զգալ: Որովհետեւ վերջին ժամանակները քաղաքական անհամաձայնութիւնները չափազանց ուժեղ էին, ուրեմն մենք այնուամենայնիւ պէտք է 'ի նկատի առնէինք մեր հակառակորդների յայտնութիւնները և ձգտէինք հասնել այն նպատակին, որ որոշել էր իր համար նախկին կառավարութիւնը: Ահա այստեղից, որ ես այժմ կանգնած եմ, նախկին մինիստրութեան նախագահը յայտնեց, որ Բերլինի դաշնագիրը մեծ օգուտներ կը տայ Եւրոպային, եթէ կատարելապէս կիրագործվի: Նա յայտնեց միեւնոյն ժամանակ, որ Անգլիան կը կատարէ իր բոլոր պարտականութիւնները այդ դաշնագիրը իրագործելու համար և յոյս յայտնեց, որ դաշնագրի կէտերը կիրագործվին ամենակարճ ժամանակամիջոցի մէջ: Չը պէտք է զարմանալ, որ այդ յոյսը չափազանցեցրած էր. օրինակ, երբ մենք սկսեցինք կառավարել երկիրը, տեսանք, որ դաշնագրի նշանաւոր կէտերից մեծ մասը մինչեւ անգամ չէին սկսել իրագործել և մենք անյապաղ սկսեցինք աշխատել իրագործել նախկին կառավարութենից մեզ կըտակած դաշնագիրը: Մեր կարծիքով այդ մեր պարտականութիւնն էր և մենք սկսեցինք մեր պարտականութիւնը կատարել, որովհետեւ այն ժամանակ երկրի մէջ մեծ համաձայնութիւն կար: Մի քանիսը կարծում են, որ մենք սկսեցինք գործը դէպի Թիւրքիան թշնամաբար տրամադրված: Ընդհակառակը մենք նրա բարեկամներն ենք, որովհետեւ խորհուրդ ենք տալիս Թիւրքիային հետեւել այն քաղաքականութեանը, որ կարող է երկարացնել նրա գոյութիւնը: Թիւրքիան ուրիշ բարեկամներ ունի: Ես չեմ խօսում մեր այն հայրենակիցների մասին, որոնք գրգռեցին Թիւրքիային մի պատերազմ սկսել, որի պատճառով այդ երկիրը փոքրացաւ: Մենք չենք կամենում, որ մեր բարեկամութիւնը այսպիսի բարեկամութիւն համարեն, բայց մենք կարծում ենք, որ Թիւրքիայի գոյութիւնը երկարացնելու և նրան արդարացնելու համար անհրաժեշտ են երկու գործ. առաջինը, որ Թիւրքիան կատարէ իր միջազգային պարտականութիւնները և երկրորդ, որ իրաւացի և լաւ օրէնքներով նա բարւոքէ իր հպատակ ժողովուրդների դրութիւնը: Այս բանը մենք խելացի և անհրաժեշտ ենք համարում: Թիւրքաց կայսրութեան մէջ կան մի քանի անյայտ տեղեր, որտեղ թոյլ կազմակերպութեան շնորհիւ ազգաբնակութիւնը մեծ արտօնութիւններ է վայելում: Բոլոր այսպիսի տեղերում ժողովուրդը բաղդաւոր է: Իսկ այն տեղերը, որտեղ անդադար վրդովմունքներ և դըժուարութիւններ են ծագում, ազգաբնակութիւնը զուրկ է տեղական հոգողութենից և կառավարվում է Կ. Պօլսի մէջ դըտնված այնպիսի մարդկերանցից, որոնք ինչքան էլ լաւ ցանկութիւններ ունենային, գործի համար պիտանի չեն: Մի կարծէք, որ այդ ազգաբնակութիւնը անգլիացի չը լինելով, երբեմն մինչեւ անգամ քրիստոնեայ չը լինելով, անարժան են վայելել քաղաքային լաւ կառավարութեան բարիքները: Ընդհակառակը, հաւատացած եղէք, որ նրանք շատ բան են խոստանում և ես երբէք նրանց մասին արհամարհանքով չեմ խօսել և ոչ ոք էլ չը պէտք է այդպէս խօսի, մի և նոյն է քրիստոնեայ են նրանք, թէ ոչ: Մենք ցանկանում ենք բարելաւել նրանց դրութիւնը խելացի և արդար միջոցներով: Բերլինի դաշնագիրը վճռել էր կանոնաւորել Թիւրքիայի սահմանները և այդ պայմանը իրագործված չէր: Յունաստանի վերաբերութեամբ դաշնագիրը փոփոխութիւններ է պահանջում, որոնք դեռ չեն կատարված: Դաշնագրի կէտերը պահանջում են տեղական արտօնութիւններ Հայաստանի համար, բռնութիւնների և հարստահարութիւնների ճնշիլը թէ այդ երկրի մէջ և թէ Թիւրքիայի միւս մասերում, բայց դեռ ոչինչ չէ կատարված: Ես չեմ ասի, որ Թիւրքիան դրա մասին չէ էլ մտածել, որովհետեւ նա ձեռնարկեց մի քանի միջոցների, բայց դաշնագրի գլխաւոր կէտերի իրագործելու համար մի քայլ անգամ չէ արված: Ուրեմն մենք աշխատում էինք իրագործել Բերլինի դաշնագիրը եւրոպական կօնցերտի օգնութեամբ: Մենք չէինք կամենում առանձնացած գործել և Անգլիայի վրա դնել ամբողջ Եւրոպայի պարտականութիւնները: Մենք միայն կարող ենք նպաստել եւրոպական համաձայնութեանը և նրա նախագծի իրագործելուն: Եւրոպական համաձայնութիւնը այն առաւելութիւնն ունի, որ նա ամենահզօր զէնք է: Ես չեմ ասում, որ այդ զէնքը շատ հեշտ է գործածել, որովհետեւ պետութիւնների ազատ կարծիքները և անկախութիւնը դըժուարացնում են այդ զէնքի գործածութիւնը: Բայց մենք չը պէտք է յուսահատվենք, որ եւրոպական համաձայնութեան օգնութեամբ կարող ենք մի բան ստանալ: Մի քանի ժամ առաջ մենք ստացանք սուլթանի հրամանով ուղարկված հեռագիրները, որոնք հաղորդում են, թէ այսօր կամ վաղը Դուլցինիօի վերաբերութեամբ կատարելապէս բաւականացուցիչ տեղեկութիւններ կը ստանանք: Թէպէտ հին առածի համեմատ մենք բոլոր լուրերին չը պէտք է հաւատանք, այնուամենայնիւ մենք ուրախ լուրը ստացանք շատ բարձր աղբիւրից":

Գլադստօնի ճառը անդադար ընդհատվում էր ծափահարութիւններով:

ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆ ՔՐԴԱՍՏԱՆՈՒՄ

Պարսկաստանի արտաքին գործոց նախարարն հետեւեալ հեռագիրն ուղղած է մայրաքաղաքիս պարսկական դեսպանատան:

„Թէհրան, 15 հոկտեմբերի. „Շէյխ Ուբէյդուլլահին հէքքեարի բնակող երկու որդիքն և Համզա աղա անուն հուշակաւոր աւազակապետը Սալմաստի և Մարաղայի գաւառաց մէջ (ի Պարսկաստան) աւարառութեան և չարագործութեանց սկսան: Զանոնք զսպելու համար զօրք ղրկուեցաւ այն կողմն. Օտարազգիք այն տեղերը ղտնուող Քրդաց վայրենի բնաւորութիւնն ու սովորութիւնները չեն գիտեր: Ասոնց կողմէ տեղի ունեցած յարձակողական շարժմունք կարեւորութենէ զուրկ են, և իրենց նպատակն աւազակութիւն է միայն: Պարսկական զօրաց մօտենալուն լուրն իմանալով, Մարաղայի մօտերէն ի փախուստ ամփոփուեցին: Պարագլուխներն ի մօտոյ պիտի բռնուին: Այս խրոտութիւնները Բ. Դրան արտաքին գործոց նախարարութեան հաղորդեցէք, և եթէ հարկաւոր դատէք հրատարակութեան յանձնեցէք: Զայս ալ գիտնաք Թէհրան նստող օտար դեսպանաց կը ծանուցանեմ:“

Վաքըթ լրագիրը, վերյիշեալ հեռագիրն հրատարակելու առթիւ, հետեւեալ տեղեկութիւնները կուտայ Համզա Աղա կոչուած Քիւրդ պէյին վրայ:

„Համզա Աղան 45—50 տարեկան մարդ մ' երկայն հասակաւ. Պէլպասի Աշիրէթին կը վերաբերի, որ Րէվանտուզի և Սալմաստուղի միջև վրաններու տակ կը բնակի, և ամառը Պարսկական հողն անցնելով Շնօ և Լահիճանի կողմերը կերթայ, իսկ ձմեռն Օսմանեան հողը կը վերադառնայ, Պէլպասի Աշիրէթին հետ Մամիշի և Մէնքուրի Աշիրէթներն ալ կան, որք ազգական և դաշնակից են:

Այս ցեղերն երբ ամառը Պարսկաստան անցնին, Սալմաստուղի կառավարչին քանի մը ձի ընծայ կը ղրկեն, և երբ ձմեռն Օսմանեան սահմանագլուխը գան, տուրք կը վճարեն, բայց զինուոր չեն տրուիր:

Նամըգ փաշան Պաղտատի կուսակալ եղած ժամանակ, Համզա Աղան սահմանագլուխն անցած լինելով, Նամըգ փաշան յայնժամ Շէհրի Զօրի կառավարիչ Թաքիէտտին փաշա քանի մը փաշտ զօրքով ղըրկեց, որք Համզա Աղան պաշարելով ձերբակալեցին, Թաքիէտտին փաշան Համզա Աղան Պաղտատ ղրկեց, ուր ժամանակ մը բանտարկեալ մնաց:

Միտհատ փաշային Պաղտատի կուսակալութեան ժամանակ, Համզա աղերսագիր մը մատուցանելով, երաշխաւոր տուաւ, և խոստացաւ իւր Աշիրէթին քով չերթալ:

Միտհատ փաշայի առաջին անգամ Մեծ-Եպարքոսութեան ժամանակն ալ, յիշեալ Համզա աղան Կ. Պօլիս գալով, Աք-Սէրայի կողմը տուն մը վարձեց, և ամուսնացաւ:

Քանի մը տարի Կ. Պօլիս բնակելէ յետոյ ամիսն հազար ղրուշ ամսականի արժանացաւ, և Պաղտատ բնակելու համար Կ. Պօլսէն ճամբայ ելաւ: Իրօք ժամանակ մը Պաղտատ բնակեցաւ, բայց յետոյ կերպով մը փախչելով, դարձեալ Պէլպասի Աշիրէթին քով գնաց:

Յայնժամ, այս Համզա Աղան Պէլպասի, Մամէշի և Մէքուրի Աշիրէթներուն նախագահութիւնն ստանձնելով, Օսմանեան և Պարսկական սահմանագլխոց վրայ ըստ առաջնոյն վրանաբնակ կեանք մը կը վարէր, և իր հրամանաց ներքեւ միշտ 4—5 հազար ձիաւոր կը գտնուէր:

Այս տարի ամառը Սալմաստուղի կողմը գնացած էր, և կըսուի թէ տեղւոյն (Պարսիկ) կառավարչէն թշնամանք և անիրաւութիւն տեսած լինելով, այն տեղերու բոլոր Քրդաց հետ միացաւ, և ապստամբութեան դրօշ պարզեց: Կը պատմուի նաև թէ Համզա աղան Պարսկական սահմանագլխին վրայ Սուլէյմանիէի մօտը Սիւննէի Պարսկական նահանգին կուսակալ Էպուլ-Ֆէթհ Միրզա խանին, որ Պարսից Շահին հօրեղբայրն էր սպառնալից նամակ մը ղրկելով, պահանջեր է, որ Սիւննէ քաղաքը յանձնէ, և նոյն կուսակալութեան երկու գաւառներն ալ դրաւեր է:

Իսկ Շէյխ Ուպէյտուլլահ, Վանայ կուսակալութեան ներքև Կաւառի և Շամտինանի բնակիչներէն հռչակաւոր Քուրդ գլուխ մըն է: Պարսկական հողին վրայ 5—10 գիւղի տէր է, և երբ թէ Պարսից պաշտօնատարաց կողմանէ անիրաւութիւն տեսած լինելով, Համզա Աղային հետ միացեր, և Պարսկական հողն արշաւեր է:

Վաքըթի այս տեղեկութիւնները բաւական մանրամասն և գոհացուցիչ են, և այդ լրագիրը մինչեւ ցարդ Քրդամոլութեան համբաւ հանած չը լինելով, հաւանական է որ կատարելապէս ճիշտ լինին:

Այս տեղեկութիւններէն գոհացուցիչ եզրակացութիւն կրնամք հանել. այսինքն՝ Թէրճիւմանը Հագիգաթին Շէյխ Ուպէյտուլլահի բնիկ տուածին պէս Պարսիկ Քուրդք Օսմանեան հողը մտած չեն, այլ Քուրդ ապստամբք Պարսկական հողը մտած են: Հետեւաբար, եթէ կայսերական կառավարութեան կողմանէ պէտք եղած զինուորական միջոցները ժամանակին ձեռք առնուին, Վասպուրականի Քրիստոնեայ և ուրիշ բնակիչք կրնան ազատ մնալ Քուրդ ապստամբաց աւերական չարագործութիւններէն:

Թէրճիւմանը Հագիգաթ հանրածանօթ Քրդապաշտպան օրագիրը Քրդական նոր ապստամբութեան նկատմամբ կատարեալ լռութիւն կը պահէ:

(Մասիս)

ՅՈՒՆԱՍՏԱՆ

Լրագիրների մէջ կարդում ենք: Նորերումս ստացված հեռագիրը առիթ է տալիս բոլորովին ուրիշ կերպ մեկնելու այն բոլորը, ինչ որ պատահում է Յունաստանի մէջ Բերլինի կօնֆերենցիայի կայանալուց յետոյ: Յունական ազգային ժողովի մէջ այժմեան առաջին մինիստր Կումունդուրոսի և նրա նախորդ Տրիկուպիսի մէջ պատահած վիճաբանութիւններից երեւաց, որ հիմնովին սուտ էր այն լուրը, իբր թէ Յունաստանը կազմակերպում է իր զօրքերը և բացարձակ պատրաստվում է պատերազմի համար պետութիւնների հաւանութեամբ:

Որովհետեւ Կումունդուրոս անարկեց, որ նախկին կառավարութիւնը անզգոյշ վարվեց և սկսեց կազմակերպել յունական զօրքերը, յուսալով մեծ պետութիւնների օգնութեան վրա, Տրիկուպիս պահանջեց հրատարակել յունական կառավարութեան և մեծ պետութիւնների մէջ եղած գրագրութիւնը, հաւատացած լինելով, որ այժմեան առաջին մինիստրը անյարմար կը գտնի այդ գործը: Կումունդուրոս ժողովի հետեւեալ նիստին բերեց իր հետ յիշեալ դոկումենտները և յայտնեց, որ կառավարութեան կարգադրութիւնները համաձայն չեն եղել միջազգային յարաբերութիւնների դըրութեան հետ:

Այս բոլորից երեւում է, որ յունական հարցի պատճառով մեծ խառնակութիւն է պատահել: Յունական ժողովուրդը խաբված էր իր նախկին կառավարութենից, որ հաւատացրել էր, թէ նրանից պահանջված զոհաբերութիւնները անհրաժեշտ են այն նախագիծը իրագործելու համար, որ տուել է մեծ պետութիւնների հաւանութիւնը և որի աջողութիւնը պետութիւնները երաշխաւորել են: Այժմեան մինիստրը հաւատացնում է, որ այդպիսի բան չէ եղած:

Այս յայտնութիւնը խիստ պէտք է փոփոխէր Յունաստանի բռնած ընթացքը: Եթէ յունական կառավարութիւնը յոյս չունի, որ պետութիւններից գոնեա մի քանիսը նրան կը պաշտպանեն, ուրեմն նրան մնում է արձակել իր զօրքերը և գոնեա ժամանակաւորապէս չը յուսալ, որ կը ստանայ այն նահանգները, որոնք տուած են նրան Բերլինի կօնֆերենցիայի վճռի համեմատ:

Այնուամենայնիւ մինչեւ այժմ յունական կառավարութիւնը ցոյց չէ տալիս, որ մտադիր է թողնել սկսած գործը: Ազգային ժողովի մէջ բացատրած փաստերը վաղուց պէտք է յայտնի լինէին Կումունդուրոսին, բայց նա յետ չէ կանգնել: Մինչեւ այժմ թէ Աթէնքից և թէ Կ. Պօլսից լուրեր են ստացվում, որ յունական կառավարութիւնը մտադիր է գրաւել այն նահանգները, որոնց նա ստացել է Բերլինի կօնֆերենցիայից: Բոլոր ժամանակ Յունաստանի մէջ կամաւորներ են հաւաքվում, իսկ Թիւրքաց կառավարութիւնը կենտրոնացնում է իր զօրքերը այնտեղ, որտեղից սպասում է յունական զօրքերի յարձակմանը: Բացի այդ Թիւրքիան ամրացրեց Դարդանելեան նեղուցը:

Այս բոլորը ապացուցանում է, որ յունական կառավարութիւնը չէ թողել իր մըտադրութիւնը և համաձայն չէ Կումունդուրոսի յայտնութիւնների հետ:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 13 նոյեմբերի: «Россія» լրագրին առանձին համարներով ծախելը թոյլ է տուած:

ԼԻՎՈՐՆՕ, 12 նոյեմբերի: Շոգենաւ «Նօրեգիա» դիպաւ Ֆրանսիական «Ժօզէֆ» շոգենաւին, որ ծովը ընկղմվեց 250 մարդկանցով:

Կ. ՊՕԼԻՍ, 12 նոյեմբերի: Դուլցինիօ մտնելուց յետոյ Դէրվիշ-փաշա հրաւիրեց Անտիվարիի մէջ եղած չերնոգօրիական զօրքերի հրամանատարին գալ Տունիա Հաջի-բէյի հետ միասին դաշնագրութիւնը ստորագրելու համար:

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ